



### ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աննե Մարիի նորագյուտ թևավոր մտքերը պատահականությունների արդյունք չեն: Նրանք ստեղծվել են աստիճանաբար, և նրանց ծնունդը նվեր է նրանց, ովքեր կփորձեն նոր հայացք ուղղել վաղաձանոթ աշխարհին: Թվում է՝ վաղուց ասվել է ամեն ինչ, և կենսական ճշգրտումներ այլևս պետք չեն: Դա միայն առաջին հայացքից: Մոլորակն ապրում է իր կյանքով, իսկ ժամանակը սրանում է առաջ՝ հաշվի չառնելով ոչինչ: Մարդը փորձում է ստանալ անհասկանալի շատ հարցերի պատասխաններ: Մեծ վեպերը, որ գրվում են այսօր, երբեմն չեն տալիս նմանատիպ հարցերից և ոչ մեկի իրական պատասխանը: Ժողովածուն ունի նման առաքելություն, որն աշխարհում կավելացնի ազնվության, կենսասիրության չափաբաժինը, սեփական հոգու հետ հաշտ ապրելու և դիմացինին չարհամարհելու ցանկությունը:

Մեր ժամանակներում (գուցե մի շտ է եղել) մարդը հեռանում է իրենից: Կտրվել տեխնոլոգիական հրաշքների դարում գայթակղիչ հետաքրքրություններից և հայել սեփական հոգուն, անչափ դժվար է: Հաճախ է մարդը հեռանում իրենից: Ավելի հեշտ է քննադատել ուրիշներին, բայց սեփական սխալներն ընդունելը բարդագույն գործ է: Իսկ մոտենալ սեփական հոգուն, նշանակում է հասնել այն տարածքին, որը մտքի և հոգու խոնարհումն է: Մոլորակի հոգեղեն կյանքը հենց այստեղ է թրծվում: Գիրքը նպատակ ունի մարդուն բարեկամացնելու իր հետ:

Ժողովածուում տեղ գտած թևավոր մտքերը որսացել են հոգու պալարախտը: Հեղինակն իրեն առաքյալ չի համարում և խրատելու միտում չունի: Անկեղծ է, աշխատասեր: Մեր զրույցների ընթացքում հասկացա, որ մշտապես ժամանակ է գտել նույն պահին որևէ մի

տեղ գրելու նորածին միտքը: Ասույթ գրելը նման չէ վեպ կամ պատմվածք գրելուն: Մեկ միտքն ավելին կարող է լինել, քան մեկ վեպի խտանյութը: Կարող է՝ ինչ-որ մեկն արդեն ասել է այդ մասին, բայց ոչ այսպիսի ձևակերպմամբ ու երանգով: Թափառող մտքեր շատ կան, որ ծնվում են միաժամանակ տարբեր մարդկանց մոտ: Տեղ գտած ցանկացած թևավոր խոսք կարող է պատճառ դառնալ գեղարվեստական ստեղծագործության: Նրբանուրբ շերտեր կան այստեղ, անձնական կենսափորձից ծնված հոգու հազարերորդական մասնիկների նվիրումներ են: Կարելի է նախանձել Աննե Մարիի ընթերցողին, որ վայելելու է նրա՝ ժամանակի ընթացքից խնամքով և ջանասիրաբար հավաքած ու մշակած այսպիսի հավաքածուն:

Տարածության ու ժամանակի առումով ևս հետաքրքիր պատկեր կա: Ասույթներում մեծ տեղ է հատկացված տիեզերական գաղտնիքներին, փորձ է՝ զիտակցական հոսքով տալ


անսահմանությունից եկող ազդանշանները: Հաշվված են ժամանակի բոլոր անցումները, հավերժն ու անցյալը, վայրկյանը, շտապողականության պարտությունը, վաղը, ընդհանրապես, ժամանակը չգնահատելու հետևանքները: Գուցե և պատերազմներ ընդհանրապես չլինեին, եթե մարդիկ յուրացրած լինեին սիրո և լույսի միաժամանակյա գոյությունը, խոսքի խաղաղությունը:

Թվում է՝ ամեն ինչ է գրվել սիրո մասին. Աննե Մարին նոր խոսք ունի այս առումով: Նա դարձյալ և դարձյալ փորձում է ցույց տալ անսեր աշխարհի վախճանական ավարտը: Հեղինակը թարմացնում է կյանքի սաղարթը այսպիսի խոսքով՝ հակիրճ ձևակերպումներով: Հաճախ վերլուծման չենթարկվող տրամաբանությամբ նա ձգտում է շտկել խոտորը, նենգը: Հավաքածուն ավելի շատ հորդորների, իմաստալից դատողությունների

աղբյուր է, որը տալիս է կենսական հարաբերությունների, Մարդու և Տիեզերքի անբակտելի կապերի խորքը նաև: Մտքի յուրահատուկ աշխատանք պիտի համարել գոյաբանական աշխարհը բնորոշելը, ավելին տեսնելը, քան հնարավոր է:

Աշխարհին հայտնի են լատինական բազմաթիվ թևավոր խոսքեր: Գրական և փիլիսոփայական տարրերով հագեցած ասույթները բանահյուսական շերտեր ունեն իրենց մեջ: Եվ այս ժողովածուն էլ իր ճշգրիտ բանաձևումներով կյանքի է կոչվում՝ երևույթներին գնահատական տալու, մարդուն օգնելու և հաստատուն պահելու այս հողի վրա:


ԱՆԻ ՓԱՇԱՅԱՆ  
Գրականագետ


- 
- Հավերժն անժամանակ է:
  - Ողջն ամբողջն է:




- *Չսպիացող վերքեր էլ կան:*
- *Պատահական պատահականություններ չկան:*



- 
- *Քո և քո միջև տարածությունն ի՛նքդ էս ստեղծում:*
  - *Հանճարեղ մարդկանց կորուստը նման է ծնող կորցնելուն:*



- *Ամենագեղեցիկը տիեզերքից լսվող երաժշտությունն է:*
- *Ժամանակը պիտի ճիշտ ժամանակին գնահատես:*

- 
- Աստուց ստացածն Աստուան է:
  - Լույսը ստվեր չունի, չնայած որ ստվերը լույսից է: